

Քաղաքականության համառոտագիրը մշակվել է Երիտասարդական ուսումնասիրությունների Ինստիտուտի (ԵՈՒԻ) կողմից՝ «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտության» արդյունքների հիման վրա:

Ինչպե՞ս զարգացնել երիտասարդական աշխատանքի ինստիտուտը Հայաստանում



©Նկարը ԵՈՒԻ, 2013

«Երիտասարդական աշխատանքը գործունեության ձև է, որի նպատակն է ներգրավել երիտասարդներին երիտասարդական ՀԿ-ների, խմբերի և երիտասարդության խնդիրներով զբաղվող այլ կազմակերպությունների և սուբյեկտների կողմից իրականացվող երիտասարդության հիմնախնդիրների, նրանց կարիքների լուծմանն ուղղված աշխատանքներում՝ նպաստելով վերջիններիս անձնային, կրթական, մասնագիտական աճին և հասարակության սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական կամ քաղաքական կյանքում երիտասարդների մասնակցությանը»¹:

Վերջին տասնամյակներում Եվրոպայում տարբեր երիտասարդական միավորումներ նշում են իրենց 75 կամ 80-ամյակները, ինչը ցույց է տալիս երիտասարդական աշխատանքի կայացմանն ու շարունակականությանն ուղղված միջազգային մոտեցումը: Դեռևս 1990-ականներին Եվրոպական Միության երկրներում իրականացվում էին երիտասարդական աշխատողների և առաջնորդների վերապատրաստումներ²:

Ինչպես Խորհրդային Միության կազմում ընդգրկված շատ երկրների մոտ, Հայաստանի դեպքում էլ բացակայում է երիտասարդական աշխատանքի և պետության կողմից երիտասարդների հետ տարվող ինստիտուցիոնալիզացված աշխատանքի պատմությունը: Իրականում երիտասարդական աշխատանքի պատմությունը որպես այդպիսին սկսվում է 1990-ականներին, երբ Հայաստանը արդեն դեմոկրատական ինքնակառավարվող և ինքնուրույն որոշումներ ընդունող երկիր էր³:

¹ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ

² The history of youth work in Europe Relevance for youth policy today

³ A history of youth work in Armenia

Հիմնախնդիրներ և դրանց հնարավոր լուծման առաջարկներ

Չնայած այդ պատմությանը, Հայաստանում դեռևս երիտասարդների հետ տարվող աշխատանքը որպես ինստիտուտ կայացնելու համար առկա են խոչընդոտներ:

Երիտասարդական աշխատողի ինստիտուտի պետական կարգավորման և համակարգման ցածր մակարդակ

Երիտասարդական աշխատանքի նպատակները, խնդիրները և նույնիսկ գործունեության հիմնական ոլորտները կանոնակարգման և հստակեցման կարիք ունեն և պետք է հստակ ամրագրվեն պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության մեջ: Երիտասարդական ոլորտի ներկայացուցիչները միաձայն նշում են, որ դաշտը կարգավորման, ներքին և արտաքին համագործակցության հաստատման, պետական շահերին ուղղված համակարգված աշխատանքի կարիք ունի, ինչը առանձին երիտասարդական կառույցների թույլ կտա իրենց ռազմավարական քաղաքականությունը իրականացնել անկախ ստացած կանճաժամկետ դրամաշնորհային ծրագրի ավարտից ու չկրկնվելուց, ինչպես նաև դոնոր համայնքին, այդ թվում պետական կառույցներին հնարավորություն կտա ֆինանսական միջոցների տրամադրման համար ունենալ համաձայնեցված առաջնահերթություններ:

Առաջարկություն: Որպես խնդրի լուծում ՀԿ-ները առաջարկում են ՀԿ-ներին տրամադրել ամենամյա դրամագլուխ, ինչը կապահովի ՀԿ-ի նվազագույն ծախսերը և կրնձեռի սեփական նախաձեռնությամբ շարունակական աշխատանքների իրականացման հնարավորություն:

Առաջարկություն: Մշակել երիտասարդական աշխատանքը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ, ինչպես նաև մեթոդական ուղեցույցերի փաթեթ երիտասարդական աշխատողների համար: Անհրաժեշտ է վերամշակել ներկայումս տարածում գտած երիտասարդական աշխատողի պաշտոնական սահմանումը, քանի որ այն ոչ ամբողջությամբ է արտահայտում երիտասարդական աշխատողի կերպարը, նպատակները, արժեքներն ու գործունեության տեսակները, չի մատնանշում երկրում երիտասարդական ինստիտուտի զարգացման հրատապությունն ու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է մշակել երիտասարդական աշխատանքի ինստիտուտի ամբողջական հայեցակարգ, որտեղ կարտացոլվի տեսլականը, խնդիրները, դերն ու նշանակությունը և ոլորտում առկա ռեսուրսների վերլուծությունը:

Առաջարկություն: Երիտասարդական քաղաքականություն մշակող կառույցը պետք է համակարգի երիտասարդական ոլորտի, այդ թվում երիտասարդներին ուղղված աշխատանքները, ինչը ենթադրում է ոլորտում առկա ռեսուրսների քարտեզագրում և ինտեգրում պետական երիտասարդական քաղաքականության մեջ:

Առաջարկություն: Սահմանել երիտասարդական աշխատանքը՝ որպես մասնագիտական գործունեությունն կարգավորել ֆորմալ կրթական համակարգում (համապատասխան մագիստրոսական ծրագրի մշակում, գնահատման չափանիշներ, շրջանավարտի նկարագիր և այլն):

Առաջարկություն: Սակայն ինչպես նշում են ոլորտի ներկայացուցիչները, կանոնակարգման ցանկացած փորձ և Երիտասարդական աշխատանքի նպատակների մանրամասն նկարագրություն կնեղացնի երիտասարդական աշխատողների գործունեության շրջանակը և գործառույթները և կարող է լրջորեն անդրադառնալ երիտասարդների՝ այս ոլորտում աշխատելու մոտիվացիայի վրա, պետք է հայեցակարգում հնարավորություն տալ երիտասարդական աշխատողներին ազատության և ճկունության համար:

Տեղեկացվածության ցածր մակարդակ երիտասարդական աշխատանքի մասին

Երիտասարդների հետ աշխատող մասնագետները, լինելով իրենց համայնքում երիտասարդական աշխատանք իրականացնողներ, հաճախ դժվարանում են խոսել իրենց կարիքների մասին, քանի որ ընդհանուր առմամբ չեն պատկերացնում երիտասարդական աշխատանքի էությունը և երիտասարդական աշխատողի գործունեությունը:

Երիտասարդական աշխատանքի գնահատման գործիքներ դեռևս հստակ սահմանված չեն: Հիմնական մարտահրավերը, որը կապված է Երիտասարդական աշխատանքի գնահատման հետ, այն է, որ չկա հստակ վիճակագրություն Երիտասարդական աշխատանքի հիմնական շահառուների՝ երիտասարդության ներգրավվածության վերաբերյալ:

Առաջարկություն: Անհրաժեշտ է տարածել տեղեկատվություն երիտասարդական աշխատողի կերպարի բնութագրի վերաբերյալ և շեշտադրել, թե որ դեպքերում անձը կարող է համարվել երիտասարդական աշխատող, որոնք են նրա հնարավորությունները և աշխատանքի ուղղվածությունը: Կարիք կա հենց ոլորտի ներկայացուցիչների շրջանում տարածել երիտասարդական աշխատանքի էության, գործառնության մասին տեղեկատվություն:

Միջինստիտուցիոնալ համագործակցության ցածր մակարդակ

Երիտասարդական աշխատանքի կայացման և զարգացման շրջանակը ամբողջականացնելու համար ցածր է երիտասարդությանն առնչվող տարբեր ոլորտների պետական և միջազգային կառույցների միջև համագործակցության մակարդակը:

Առաջարկություն: Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման և զարգացման համար կարևոր է երիտասարդության ոլորտի բոլոր դերակատարների ներգրավումը և նրանց միջև փոխհարաբերությունների, համագործակցության կարգավորումը: Հաշվի առնելով երիտասարդության ոլորտի միջսեկտորալ բնույթը, պետք է նաև սահմանել երիտասարդության ոլորտի դերակատարների և

Երիտասարդներին առնչվող ոլորտներում ներգրավված կառույցների միջև հարաբերակցությունը, որոնց թվում են կրթության, սոցիալական ապահովության, առողջապահության, պաշտպանության և մյուս ոլորտները:

Համագործակցության ցածր մակարդակ պետական և տեղական կառույցների հետ

Որպես իրենց գործունեության իրականացման խոչընդոտ, համայնքում երիտասարդական աշխատանքի իրականացման մասնակիցները նշում էին թույլ կապը պետական մարմինների հետ, ինչի պատճառով իրենք չեն կարողանում օգտվել պետական ռեսուրսներից: Իսկ փոքր համայնքներում երիտասարդական աշխատանքների իրականացման ժամանակ երիտասարդական աշխատողները ունենում են ռեսուրսների պակաս/ռեսուրսների մոբիլիզացիայի հմտության պակաս:

Առաջարկություն: Նման խնդրի լուծման համար երիտասարդները տեսնում են լուծում համայնքում պատասխանատու անձի նշանակումը, ով քաջատեղյակ կլինի և իրավասու կլինի ի նպաստ երիտասարդական աշխատանքների կատարման շահագործել համայնքի ենթակառուցվածքները, պետական ռեսուրսները:

Առաջարկություն: Ոլորտի ներկայացուցիչները շեշտադրում են ինստիտուտի առողջ գործառնության համար միջինստիտուցիոնալ/ միջսեկտորալ կապի ապահովման կարևորությունը պետական մակարդակով:

Առաջարկություն: Երիտասարդական աշխատողների վերապատրաստման ծրագրում ներառել «Համայնքային մոբիլիզացիա» թեմայով կրթական մոդուլ:

Սույն համառոտագիրը մշակվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարության աջակցությամբ իրականացված «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն» ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրության հիման վրա, որը հասանելի է www.ystudies.am կայքում: